ԼՐՈՅ ԳԻՐ

ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱԹԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԻՐ 22·23

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ԱՊՐԻԼԻ 25· ՈՐ Է ՌՄԽԷ ԶԻԼՀԻՃՃԷԻ Ը

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ·

ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Ասկէց յառաջ տըպված Լրոյ գրին մէջը յիշված կերպովը՝ վեհափառ Ինքնակալը անցեալ շէվալի ամսոյն 29 շաբաթ օրը ժամը 5 ին՝ չըրաղան ըսված ծովեզերեայ արքունի ապարանքէն՝ երբոր Քայմագամ փաշային Պալթայ լիմանին մօտ եղած ծովեզերեայ ապարանքը ցամաքէն կերթար, Ճամբան Նահեայ եֆէնտի ըսված տեղին փողոցին մէջը՝ պատին կըռթնած մէկ վիրաւոր հողագործ մը տեսաւ. և իսկոյն գթութն շարժելով ձիոյն գլուխը քաշեց, և այս ողորմելին որպիսութիւնը հարցունելու համար՝ քովը եղող Ֆէրիգի խասսա պէկլէր պէկի Ահմէտ փաշային հրաման ըրաւ. և անոր յայտարարութենէը իմացաւ որ Ուլահու և Պուղտանու հարկատուներէն (ռաեաներէն) աղքատ մը ըլլալով՝ Առնավուտ գեղը մէկ շինվածքի (եափուլի) մէջ բանած ատենը ինկեր երեսը վիրաւորվեր է:

Ուստի ողորմած Ինքնակալը իր առատ գթութենը նոյն փաշային հրաման ըրաւ, որ այս խեղճը շուտով արքունի մանսուրէ զօրաց հիվանդանոցը ուղարկէ. որ այն տեղը նային և դարման ընեն:

Նոյն խեղճը հիվանդանոցը խըրկվելուն յետոյ, միւս օրն ալ նոյն փաշայն անձամբ հիվանդանոցը գնաց. և զօրաց հիվանդներուն յատկացեալ մէկ թախտմը լաւ զգեստ հագցնել տըվաւ. և սոր վէրքը դարմանելու համար՝ հոն տեղը եղող Սալթ անուն վարպետ ճէռահին պատվիրեց:

Ուստի մէկ քանի աւուր մէջը Արքային գթառատ հովանաւորութենէը վէրքը առողջանալով, այս աղքատ հողագործը ասատիկ ուրախութենէն՝ ասանկ ռաեաներուն վրայ գութ ունեցող ողորմած Ինքնակալին բարեբաղդ կենացը համար՝ սրտի մըտօք աղօթք կընէր:

Ինչպէս ասկէց յառաջ տըպված Լրոյ գրին մէջը յիշված էր. Անատօլուի կողմին Ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշայն զիլգադէի ամսոյն 11 ին՝ հինգշաբթի օրը ժամը 4 ին և 16 րոպէին բարենշան ժամանակը աղօթք ըրաւ, և ձին հեծաւ, և Սուլթան պայազիտի մէջը եղած իր բնակարանէն ելաւ:

Եւ մուզիգաներով մէկ տեղ՝ մէկ Թա-
փօր մանսուրէ զօրքեր և զօրավարներ, և
շատ խավաներ, և ուրիշ սպասաւորներ,
նաև Սէրասքեր փաշայն առջևէն՝ հան-
դեսով մինչև Պախչէխափուի նաւակայ-
անը իջան. և այն տեղը պատրաստ եղած
մեծ նաւովը, և Սէրասքեր փաշայն ալ ու-
րիշ մեծ նաւովմը առջևէն երթալով Իւս-
կիւտարու մեծ նաւակայանը հասան. և
անոր մօտը եղած Միհրիմահ սուլթանի
վճարանքին ժամատանը (մուվագգիթ խա-
նէին) մէջը քիչմը ատեն նստան։

Եւ ինչպէս 1 նումերայով տպված տաճ-
կաց 1 րդ գրին մէջը յիշվեցաւ. Թագա-
ւորին կողմանէ մեծուէ նշաններու պար-
գևներով փառաւորված գիտունները (իւ-
լամէները) և նախարարները (րիճալները)
և ուրիշ արքայական գործակալները որ վա-
րը պիտի յիշէնք, ասոնք ամմէն ալ յա-
ռաջմանէ եկած այս հանդէսին համար,
նոյն վճարանքի մէջը կըսպասէին։ Եւ երբ
իրենց ձիերը հեծան, ընդհանուր հրամա-
նատարն ալ այս մեծ հանդէսին ետևէն
մինակ ձիով, ընդարձակ ճանապարհէն շի-
տակ Իպրահիմ աղայ ըսված չայըրին բա-
նակին եղած տեղը գացին։

Եւ այն օրը մեծայաղթ Թագաւորնալ
Թէ ընդհանուր հրամանատարը, և Թէ ա-
նոր հետը եղող իր զօրքերը ուրախացնէ-
լու մօք՝ այն բանակին մօտերը եղած իր
Թագաւորական ամարանոցը (քէօշկը) ե-
կած էր. և այն գեղեցիկ ամարանոցին մօ-
տերը բոլոր հանդէսին մեծամեծները և
ընդհանուր հրամանատարը՝ իրենց ձիերէն
իջնալով, նոյն ամրանոցին առջևը կարգաւ
կանգնեցան. և այն ժամանակը առաջին
իմամ Նըքային՝ Զէյնէլ ապիտին էֆէն-
տին ալ՝ Թագաւորին երջանիկ կենացը մշ
տնջենաւորուէը, և անոր հակառակորդ-
ները յաղթվելնուն և հնազանդելնուն հա
մար մաղթանք կարդաց։ Եւ հոն ներկայ
գտնվողներն ալ հարաւային կողմը դառնա
լով ուղիղ սրտով ամէն կըսէին յետոյ,
Նըքային առջևը խոնարհելով ետ դարձան։

Իսկ ընդհանուր հրամանատարը Թա-
գաւորին առջևը մտաւ և երկիր խոնար-
հեցաւ. և Թագաւորն ալ նորէն մէկ քա-
նի պատւէրներ տալով կրկին փառաւո-
րեց. և ապա ան ալ իր յատկացեալ վրանը
(օթախը) դարձաւ։

Տէր ԱԾ ամենայն կերպիւ յաջողուԹԻ
պարգևեսցէ, ամէն։

ՎԵՐՈՅԻՇԵԱԼ ՀԱՆԴԷՍԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ Է։

—

Նախ՝ ընդհանուր հրամանատարին Թաթարները։
Երկրորդ՝ ձիաւոր արքունական զօրքերը։
Երրորդ՝ հետևակ արքունական զօրքերը։
Չորրորդ՝ արքունի պաշտօնեաներէն 2 ձիաւոր։

—

Առաջին Թէլխիճի Շիւքրի աղայն.
Երկրորդ Թէլխիճի Հալիմ աղայն։
Ընդհանուր հրամանատարին հետը գնացող խա-
լէմներու գրագիրները։

—

Րըճէտճիի խալֆաներէն Սալիմ էֆէնտին.
Եւ Րիֆաթ պէկ էֆէնտին։
Րէյիսի քէսէտար Նասիր էֆէնտին.
Պէկլիկճիի քէսէտար Նուրի էֆէնտին։
Դիվանի Թարգման Էսրար էֆէնտին.
Մէքթուպճիի պաշ խալֆա Շէրիֆ էֆէնտին։
Հարէմէյնի մուգաթաճի Սայիտ պէկ էֆէնտին.
Թիւթիւն կեօմրիւկճի Մուստաֆա աղայն։
Խասսայ պաշի Շաքիր էֆէնտին.
Արքունի շինվածապետ Հալիմ էֆէնտին։
Արքունական գրագիր Սատի էֆէնտին.
Իփէկի նազըր Իւմէրլութֆի էֆէնտին։
Քէհեապէկի գրագիր Իպրահիմ էֆէնտին.
Մանսուրէի գրագիր Օսման պէկ էֆէնտին։
Արքունի դիվանի պէկլիկճի Աքիֆ էֆէնտին.
Արքունի դիվանի ամէտճի Րէշիտ պէկ էֆէնտին։
Երկրորդ Թէզքէրէճի Ալի պէկ էֆէնտին.
Մէքթուպճի Ադըլֆ պէկ էֆէնտին։
Մուդպախ էմինի Սալիհ պէկ էֆէնտին.
Առաջին Թէզքէրէճի Աքիֆ էֆէնտին։
Թօփխանայի նազըր Արիֆ պէկ էֆէնտին.
Պարութխանաներու նազըր Սայիտ էֆէնտին.
Ջարպխանայի նազըր Րիզա էֆէնտին.
Հարպիէյի նազըր Էմին էֆէնտին։
Տէֆթէրի նազըր Սայիտ էֆէնտին.
Թէրսանէ էմինի Ալի պէկ էֆէնտին։
Ջահրէյի նազըր հաճի Վէլի աղայն.
Իհթիսապի նազըր Փաիզ էֆէնտին։
Մուգաթաաթի նազըր Նաֆիզ էֆէնտին.
Մասարըֆաթի նազըր Սալիհ էֆէնտին։

Արքունի եվգաֆի նազըր Սայիտ էֆէնտին ·
Արքունի դիվանի նշանճի Ալի էֆէնտին ։
Րէյիս իւլ քիւթթապ Նէճիպ էֆէնտին ·
Չավուշպաշի Նաշիտ պէկ էֆէնտին ։
Վէզիր.քեահեասի փերթէվ էֆէնտին ·
Առաջին տէֆթէրտար Ալի պէկ էֆէնտին ։

—

Արքունի պաշտօնեաներէն երկու ձիաւոր ։

—

Մախրէճի մօլլաներէն Նուրի պէկ էֆէնտին ·
Երկրորդ իմամ արքային Նուրի էֆէնտին ։
Մէքքէյի աստիճան ունեցող Թագվիմի վագայեի նազըր Էսատ էֆէնտին ·
Եւ չէրքէշցի Մուհամմէտ էֆէնտին ։
Ըսթամպօլ գատըսի Սէրվէթ էֆէնտին ·
Մէքքէյի աստիճան ունեցող Ապտիւլհագ է″ ·
Ըսթամպօլու աստիճան ունեցող Նագիպի էշրէֆ Արիֆ պէկ էֆէնտին ·
Եւ ապտիւլ ֆէթթահ պէկ էֆէնտին ։
Անատօլուի աստիճան ունեցող Ապտիւլ գատըր պէկ էֆէնտին ·
Եուսուֆ փաշայ զատէ Նազիֆ պէկ էֆէնտին ։
Նախկին անատօլուի գազէսքէր Համտուլլահ է″ ·
Այժմեան անատօլուի գազէսքէր և առաջին իմամ արքային Ջէյնէլ ապիտին էֆէնտին ։
Նախկին րումէլիի գազէսքէր արքունի բժշկապետ Պէհճէթ էֆէնտին ·
Րումէլիի աստիճան ունեցող Սատուլլահ էֆէն″ ։
Այժմեան րումէլիի գազէսքէր Արիֆ պէկ էֆէն″ ։

—

Արքունի պաշտօնեաներէն երկու ձիաւոր ։

—

Անատօլուի աստիճան ունեցող արքունի բանակին դատաւոր Մուսա էֆէնտին ·
Նոյն բանակին տէֆթէրտարըն Թահիր էֆէն″ ·

—

Արքունի ձիաւոր զօրաց գնդապետները և գօլ աղաները ։

—

Թօփճի փաշայն ·
Ֆէրիգի մանսուրէ պէկլէրպէկի Մուհամմէտ փա″ ·
Ֆէրիգի խասսա պէկլէրպէկի Ահմէտ փաշայն ։
Գափուտան փաշայն ։
Գայմագամ փաշայն · Սէրասքէր փաշայն ։

—

Ընդհանուր հրամանատարին եէտէկ ձիերը ։
Եւ ինքն ընդհանուր Հրամանատարն ։
Եւ գանձապետները · և յարգի անձինքները ։
Եւ գանձի բեռները ։

Րէյիս սէյիտ Սիւլէյման Նէճիպ էֆէնտին իրէն մեծ պաշտօնին մէջը ունեցած ջանքը ամենուն յայտնի էր · բայց իր անձնական տկարութիւնը օրըստօրէ սաստկանալով մինչև ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշային համդէսը չկրցաւ գտնըւիլ · և տկարութեան պատճառաւ իր պաշտօնին չէր կրնար վերակացութիւն ընել, և աս ալ հոգ ընելովը առաւել կըհիվանդանար ։

Ուստի վեհափառ Ինքնակալը որ այս էֆէնտիին վրայ միշտ գութ ունէր, այս անգամ կրկին գթալով իր շնորհ ըրած արքունի հրամանագրին հարկադրութիւնը, այն Րէյիս էֆէնտիութեան պաշտօնը՝ արքունական դիվանին պէկլիկճի հաճի Աքիֆ էֆէնտիին շնորհեցաւ ։ Եւ պէկլիկճիութիւն ալ շատ ժամանակէ 'ի վեր պէկլիկ քէսէտարի գտնըւօղ Նուրի էֆէնտիին շնորհեցաւ ։ Եւ պէկլիկճիի և ամէտի խալֆաներուն ընտիրներէն Մուհամմէտ նաֆի էֆէնտին որ յառաջմանէ արքունի դիվանի գալեմէն ելած էր, և հրովարտակներու լաւ ծանօթ ըլլալով պէկլիկ քէսէտարի դրվեցաւ ։

Եւ արքունի զարպխանէին նազըր սէյիտ Ալի րիզա էֆէնտին աղըլ ըլլալով, զարպխանէին նազըրութիւնը՝ մուգաթաաթ նազըրի ապտիւլրահման Նաֆիզ էֆէնտիին շնորհեցաւ ։ Եւ մուգաթաաթ նազըրութիւն ալ յառաջմանէ մուգաթաաթ խազնէին զիմմէթըլէզօղ՝ և նոյն խազնէին գործքերուն հմուտ Մուհամմէտ էֆէնտիին խօճակեանութիւնը հետ 'ի միասին շնորհեցաւ ։ Եւ ասոնք զիլգաատէի ամսոյն 12 ին՝ ուրբաթ օրը կապայ հագան ։

Եւ յառաջմանէ անտի զարպխանէի նազըրութեան աստիճանը բարձր ըլլալով՝ արքայական շնորհումներուն տէֆթէրին մէջն ալ վերի կողմը գրված էր · բայց նոյն տէֆթէրին մէջը հետ զհետէ մէկ քանի պաշտօններ մտնալով, և կամ այն պաշտօններուն պատիւը մեծնալով, վայր աստիճան մնացեր է ։ Ուստի այս անգամ Ինքնակալին հրամանովը զարպխանէի նազըրութիւնը յիշեալ տէֆթէրին մէջը մուգաթաաթ նազըրիին վրայի կողմը գրըվեցաւ ։

Այս տարի Աղիպտոսի յայտնի եղած կացութիւնը նայելով, Ռասպիտանի խառնակութիւնը կերևի. անոր համար արքայական սիւրբին և հիւճճաճները Թեապէի կողմը ուղարկելը պատշաճ չըլլալով, սիւրբին և հիւճճաճները դէպ ի Հալէպ երթալնին՝ Շամին գիտուններին և երևելի անձինքները արքայանիստ քաղաքը յայտարար գիր գրած էին, ինչպէս տակէց յառաջ տրված Լրոց գրին մէջը յիշեցաւ։ Այս հիւճճաճները Թեապէ երթալնին, և Թեապէի ժողովուրդները սիւրբէ առնելնին, այս անգամ տկամայ զբրկվելնին յայտնի է։

Ուստի սիւրբին և հիւճճաճները Հալէպու մէջ կենալնին հարկաւոր չըլլալուն պատճառաւ, պաշտօնատարութիւնը Շամի մէջը գըտնվող խօճակեան Լվին պէկը որ սիւրբին հետը Հալէպ եկած էր, հիմա անոր փոխանորդութիւնը սիւրբին արքայանիստ քաղաքը խրկվելուն՝ Լբրայի հրամանով Հալէպի բդեշխին գիր գրվեցաւ։

Այս անատօլուի ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշային քովը՝ տերութիւնները նախարարներին արքունի բանակին տեփթերատար Մահիր էֆէնտիին ուրիշ մարդ չըբանվելով, սիւրբէ եմնի եղող հատի Լահեմ էֆէնտին ալ՝ նոյն Հիւսէյին փաշային քովը պաշտօնատար գտնվելուն հիր՝ Լբրայի հրամանով իրեն գիր գրվեցաւ։

ԵՒ ծովու պօղազին նազբը խափուճի պաշի Յէյլի աղայն խոհեմ և մտացի ըլլալն ի զատ՝ երկրաչափութիւն ևս գիտէր, և բարեկրթութիւն ունէր. անոր համար արքունի Մօսխանէին և Խումպարխանէին ռումբերուն (իւվարլանները) վրայ պաշտօնատար էր. և այս պատճառով Ամանգօճուք ըսված տեղին նազբութիւնը իլթիզամները իրեն յանձնված էր։ Այդ Յէյլի աղայն այս մօտերս մեռնելով, իր եղբայրը Լմին աղայն որ փոխանորդութիւնը պօղազին նազբութիւնը պաշտօնը ունէր, նոյն պաշտօնը իսկապէս իրեն յանձնվեցաւ։ Իսկ որովհետև ռումբերուն գործքերը հմտութիւն ունեցող մարդու յանձնվիլ հարկ էր, վասն որոյ այժմեան Մօսխի փաշային՝ որ այս արհեստին տեղեակ և իր պաշտօնին յարմար էր, ռումբի գործքին հետ կապված իլթիզամները անոր պաշտօնատարութիւնը վերադիր եղաւ. որ երբեմն երբեմն Ամանգօճուք երթայ, վերակացութիւն ընէ։ Այս նոյն փաշայն ալ իր կողմանէ Փերավէշթեի մէջը գտնվված լաղըմ՝ ի գնդապետ (միրալայ) Մուհամմէտ պէկին յանձնեց, որ այս գործքին լաւ վերակացութիւն ընէ. և նոյն պէկին բաւական ապրուստ կապվեցաւ։

ԳՈՐԾՔ ՕՐՄԱՅ

Լբքունի մանսուրի հեռևակ զօրքերուն առաջին գաւառապետութիւնը (լիվան) Լնատօլուի կողմը խրկվելը՝ մեծափառ Լնք նակալին հրամանը եղած էր. ուստի յաջողութիւնը յաւիտենականին՝ զիլգատէի ամսոյն չորրորդ հինգշաբթի օրը յիշեալ գաւառապետութիւնը առաջին գունդին՝ առաջին և երկրորդ թափօրները, նոյն գունդին տեղապահ Իշեխա պէկին հետը իւսկիւտարու Հարէմ՝ ըսված նավակայանէն յարմար նավերով Մուտանեայի նավակայանը ելլալնուն համար խրկվեցան։

Յիշեալ ամսոյն վեցերորդ շաբաթ օրը նոյն գունդին՝ երրորդ և չորրորդ թափօրները, գնդապետ Մուստափա պէկին հետը Մուտանեայի նավակայանը ելլալնուն համար խրկվեցան։

Այնմանապէս նոյն ամսոյն ութերորդ երկուշաբթի օրը՝ վերոյիշեալ գաւառապետութիւնը երկրորդ գունդին՝ առաջին և երկրորդ թափօրները, նոյն գունդին տեղապահ Հասան պէկին հետը խրկվեցան։

Այնմանապէս նոյն ամսոյն տասներորդ չորեքշաբթի օրը յիշեալ երկրորդ գունդին՝ երրորդ և չորրորդ թափօրները, գնդապետ Մուհամմէտ պէկին հետը խրկվեցան։ Այս նոյն գունդին գաւառապետ Տնելավէր փաշային ալ նոյն օրը խրկվեցաւ։

Այս վերոյիշեալ գաւառապետութիւնը հետը արքունի հեռևակ զօրքերուն՝ ռումբաձիգ

(Թօփճի) Թափօրին Թնդանօթները (Թօփերը) ծովէն Իւնիմիւռի Նաւակայանը խրկուելով, և բեռնաւորած գրաստ և ուրիշ հարկաւոր պիտոյքները ցամաքէն խրկուելով, վեհափառ Ինքնակալին հրամանը կատարուած է։

Անկեց յառաջ Թագաւորին հրամանովը նորէն բացուած արքունի մանսուրէ հեծեալ զօրքերուն չորրորդ գունդին՝ երկրորդ Թափօրը չորս գունդ եղաւ. և մնացած գունդերին ալ Արքային հովանաւորութեը քիչ ժամանակի մէջ կարգադրըվելու մօտ ըլլալով, յիշեալ Թափօրին մէկ հազարապետմը գրուիլը պէտք եղաւ։

Ուստի արքունի զօրաց առաջին գունդին՝ երրորդ Թափօրին սօլգօլ աղասի Ազմի էֆէնտին զօրաց կառավարութեը ուրիշներէն աւելի տեղեակ ըլլալով, Ինքնակալին հրամանովը՝ զիլգատէի ամսոյն վեցերորդ շաբաթ օրը՝ նոյն Թափօրին հազարապետ գրուեցաւ։

Անկեց յառաջ գնդապետ Մուհամմէտ ալի պէկը որ Ինքնակալին հրամանովը արքայանիստ քաղաքը եկած էր, նոյն պէկին կառավարութե ներքևը եղած ձիաւոր վեցերորդ գունդը՝ մէկ քանի օր հանգչելէն յետոյ, զիլգատէի ամսոյն իններորդ երեքշաբթի օրը Սերասքերի դուռը բերուելով, ձիաւոր զօրաց կրթութիւնը ցոյց տուած է. և Անատօլուի կողմի ընդհանուր հրամանատարին քովը պատրաստ գտնուելուն համար՝ նոյն օրը մավունաներով Իւսկիւտար խրկուեցաւ։

Էրզրումի նահանգին Թիմարլուները որ անկեց յառաջ Ինքնակալին հրամանով արքայանիստ քաղաքը եկած, նոյն Թիմարլուներուն գործի չեկօղները զատելէն յետոյ, ձիաւոր տասներորդ լման մէկ գունդ մը կարգադրեցան. և ասոնց կրթութեը վերակացու եղօղ գնդապետին յանձնուելով, յիշեալ ամսոյն չորրորդ հինգշաբթի օրը Թօփխանէի կողմը խրկուեցան։

ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Անկեց յառաջ տրուած Լրագրին մէջը յիշուած կերպովը, Անատօլուի կողմին ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշային՝ զիլգատէի ամսոյն 11 օրը Իպրահիմ աղայ չայըրին բանակին եղած տեղը գացած էր։ Եւ նոյն փաշային յիշեալ ամսոյն 18 ին՝ հինգշաբթի օրը բարենշան առենը՝ իր հրամանատարութե կողմը գնաց։

Բայց նոյն գիշերը՝ վեհափառ Ինքնակալը հոն տեղը ունեցած իր Թագաւորական ամարանոցը եկած էր. և ընդհանուր հրամանատարին ալ կրկին Արքային առջևը ելաւ, երկիր խոնարհեցաւ. և զօրաց վերաբերեալ մէկ քանի պատուէրներ առաւ, և Թագաւորական օրհնութիւնը փառաւորեցաւ։ Եւ Կայմագամ փաշային, և Սերասքեր փաշային ալ հոն գտնուելով, միմեանց հետ մնաք բարով ըրին։ Տէր ած ամ կերպիւ բարի յաջողութիւն պարգևէ, ամէն։

Անկեց յառաջ տրուած Լրագրերուն մէջը քանիցս անգամ յիշուեցաւ. որ Մուհամմէտ ալի փաշային, և Աքքեայ վալիսին մէջը պատահած կռւոյն համար՝ վեհափառ Ինքնակալը գործքով մէկ բան մը մինչև հիմա հրաման չըրաւ. բայց միայն նախապատրաստութե հետը՝ նոյն փաշային ժամանակ ժամանակ խրատներ և պատուէրներ տալէն ետ չըկեցաւ։

Վասն զի Ինքնակալին կամքը և միտքը միշտ ժողովրդոց հանգստութիւնը կընայի։ Ուստի մինչև հիմա այս խրատներով Արքային կամքը հետևելուն համար՝ Թէև իրեն պատուէրներ տրուեցաւ, այն ալ ետ չը կենալով, մէկ կողմանէ իր տղէն Իպրահիմ փաշային՝ որ Աքքեայի վրայ ձեռք երկընցուցած է, անոր օգնութեը համար զօրք ուղարկելու կաշխատի. և մէկ կողմանէ ալ այն կողմերը եղօղները խաբելու մտօք սուտ ձայն հանած է. որ Թէ այս իրեն գործքը

Պ.ռբային կամոցը գէմ չէ. և իբրու Սայ-
տայի և Շամդարապուլուսի իշխանուն-
ները՝ Թագաւորին կողմանէ խնդրելով,
իրէն շնորհելուն պատասխանին կսպա-
սէ. և սանկ խաբէական շինծու խօսքեր
տարածելու կըհետևի։

Սերջապէս իր խընդրած բանէրուն
ամենևին թոյլտրվուԹի և ընդունելի չըլ-
լալը, և եԹէ իր անկարգ գործքերուն մէ-
ջը յամառելու ըլլայ, մօտ ատեն պատիժ
կրելը վերջին պատասխան ըլլալով, իրէն
գրով ծանուցված է։

Այց մինչև հիմա իրէն յաջողուԹ շը-
նորհքը չըգիտնալով, և իր չար կրիցը հե-
տևելով, Պ.քեայի բերդը պաշարեց և նե-
ղեց. և քանիցս անգամ տրված ականները
(լաղումները) օգնականուԹն այ հետ դառ-
նալով, Իպրահիմ փաշայի բանակին մեծ
վնասներ և շփոԹուԹիներ տվեր է. և ասոր
վրայ կրկին երեք չորս կողմէն փորած ա-
կանններուն Պ.քեայի մէջէն առջևը կտրե-
լով խափանվեր է. և անոնց մէկը հետ դառ-
նալով իրէնց վնաս տվեր է. և միւսներն
ալ առջևնին կտրըվված ըլլալուն հա-
մար, տասն երկու հատի չափ մեծ և ապուս
ԹնդանօԹներով, անցեալ պայրամին գի-
շերը մէկ ֆիԹիլէն սկսելով, շարունակ
վեց օր և վեց գիշեր բերդը ծեծեր է. և
դուռն աշտարակը (պուրջը) փըլցընելով,
հողը և քարը խրամին (խէնտէկին) մէջը
լեցուցեր է. և խրամին դուրսի պատն ալ
ականով նետեր է. և գրեԹէ խրամը լեցը-
նելով, քսան և երեսուն մարդ մէկզմէկու-
քով դիւրին կերպով ելլալու մէկ ճամբայ
մը բացվեր է։ Իւ ապա պայրամին եօԹ-
ներորդ ուրբաԹ գիշերը առաւօտեան դէմ
յանկարծակի արշաւելով, (իւրիւշիւշ
ընելով,) քանի մը հարիւր մարդ աշտարա-
կին վրայ ելեր իրէնց դրօշակները (պայ-
ռաքները) տնկերեն։ Այց բերդին մէջը
գտնըվող զօրքերը Թուրքերին բաց անոնց
վրայն դիմելով, աշտարակին վրայ եղած
Եգիպտոսի զօրքերէն 84 կտրած գլուխ
առերեն. և ետ դարձող և խրամին մէջը
լցվող, և կամ ետևէ եկող Եգիպտոսի զօր
քերուն Թափօրները՝ Պ.քեային Թնդա-
նօԹներէն և հրացաններէն և սալդիմնե-
րէն ցիր և ցան եղերեն. և այս արշաւան-
քին վրայ՝ Եգիպտոսի զօրքերուն վիրա-
ւորներէն 'ի զատ՝ 1200 հոգիէն աւելի կո-
տորված ըլլալը, Պ.քեայի բդեշխին խը-
կած գերիներն յայտնի եղած է։ Իւ յա-
ռաջմանէ ծովի կողմանէ ալ Պ.քեայի վրայ
եկող Եգիպտոսի նաւերուն շատն ալ յոյժ
վնասելով, Պ.ղեքսանդրիայ դարձերեն։

Իւ այս անգամ Շիրտէի պաշտօնա-
տար եղող իշխանաց իշխան Օսման փա-
շային Շամդարապուլուսի հրամանատա
րուԹիը իրէն շնորհումեղած էր. երբ այն
կողմերը հասաւ, Դարապուլուսի և Դա-
պուլուսի բնակիչները իրէնց կրօնքին հար
կադրուէն ամենևին չեն պատերազմիր.
միայն Իպրահիմ փաշային կողմանէ Դարա
պուլուսի բերդին վրայ դրըված բարբա-
րոս Մուստաֆա անուն մէկը՝ շատկէկ
Եգիպտոսի զօրքերով դէմ ելելը պատերազ
մեր է. բայց հոն ալ Եգիպտոսի զօրքերը
յաղԹվելով, Թէ զօրքերէն և Թէ զօրա-
վարներէն շատ մարդիկ կոտորվերեն. և
շատ զէնքեր և պատերազմական պիտոյքներ
և կտրած գլուխներ և կենդանի բռնված-
ներ առնվեր է։ Իւ Դարապուլուսի
բերդն ալ վերցուցեր Օսման փաշային կող
մանէ մինչև հիմա նեղած ըլլալով մօտ օ-
րերս տիրելու լուրը, Հալէպի և Շամ
կողմերէն եկած գրերէն յայտնի եղած է։

Իսկ Մուհամմէտ ալի փաշայն՝ որուն
կողմանէ տրըվված խրատներէն Թէև չէր
զգաստացեր, գոնէ ճծային կողմանէ իրէն
եղած կոտորվածքէն պէտք էր արԹընալ.
բայց տակաւին խելքը գլուխը չըբերելը
յիրաւի իրէն նախասահմանեալ Թշվառու-
ԹԷը հանդիպելուն յայտնի ապացոյցն է։

Սերջապէս Մուհամմէտ ալի փաշայ-
ին այս իր անկարգ գործքը, միայն Սայ-
տայու վալիին հետ ունեցած հակառա-
կուԹէն և նեղանալէն յառաջ եկած չէ.
այլ իրէն երևակայուԹեը մէջը պըտրտած
մէկ քանի անկարգ ցանկուԹիներէն յառաջ
գալը, ինքըզինքը գիտցող խոհեմ մարդիկ-
ները ամէն կերպիւ տեղեակ են։

Իւ այն կողմերը և կամ Թէ լայնածա-

ուսալ Ս. Բաղիստանի սահմանին մէջը գտնուող բնակիչները՝ բոլոր տաճկաց՝ մեծ աղօր և վեհափառ Ինքնակալը եղող Թագաւորին հրամանին հպատակութեան և հնազանդութիւնը պատրաստութիւնին գիտնալուն համար՝ Մուհամմէտ ալի փաշային կերէնք մնոտի դրդելէն չբխաբվելով, և իրէնք զի ըէնք վտանգի մէջ չընձգելով, ամէն կերպիւ մեծի տէրութիւն հրամանին հնազանդելէն ետ չընկենալնին յայտնի է։

Մանաւանդ այս դիտաւորութեամբ խնդիրը վերոյիշեալ Դարապուլուսի և Կապուլուսի բնակիչներուն իրէնց կրօնքին հարկադրութիւնը՝ պատերազմելէն ետ մնալէն յայտնի կըլլայ։

Սակայն պատերազմելու հետևօղներն ալ՝ բանին վերջը ուր կայանալը չըգիտնալով, շատմը ինքզինքը չըգիտցող Յելամներէն, և իր կրթութեան ներքևը գտնըվողներէն են։ և ասոնք ալ վերջը իրէնց գլխուն գալու պատիժները մտածելով, Ս. ըքային կամացը հնազանդ ըլլալնին յայտնի է։

Ս. յուսամենայնիւ եթէ ասոնք ալ տակաւին դեմ կենան, ասոնց հետ ալ պատերազմիլ հարկ կըլլայ։

Սակայն ասոնք Մուհամմէտ ալի փաշային նենգութիւնը խաբված և պարապ տեղը կրակը այրըվելնուն համար՝ այսուհետև ասոնք պատերազմի մէջ սպանվելնին, գլուխնին իրէնց մարմիններէն չառնըվելու համար՝ ազգայական հրամանով տէրութեան կողմանէ բոլոր պաշտօնատարներուն յայտարարուի եղաւ։

Հասիթի (Տիարպէքիրի) մեծատուններէն և ազգուանի սալահօներէն շէյխ օղլու Իպրահիմ փաշայ զատէ Օսման պէկը՝ ամէն կերպով հաւատարիմ ըլլալով, և յարմար պաշտօններու վրայ դրվելու ունեցած արժանաւորութիւնը յայտնըված ըլլալուն համար, անոր իշխանաց իշխանութեան աստիճանը շնորհելը, այժմեան Ռաբելոնի (Պաղտատի) բդեշխ Ս. ի փաշային՝ Թագաւորեալ քաղաքը խրրկած գրերուն մէջը աղերսանք և խնդիրք ըրած էր։

Ասոնի ազգուանի հրամանագրին կերպով՝ զիլգատէի ամսոյն 15 ին՝ յիշեալ Օսման պէկին մերի միրանութեան աստիճանը շնորհեցաւ, և հարկ եղած հրովարտակն ալ խրրկըվեցաւ։

Պաղէսքէրի աստիճան ունեցող Ինաոլուի բանակին դատաւոր Մուսա էֆէնտիին տղայն՝ սէյիտ Մուստաֆա համիտ էֆէնտին որ աստիճանաւ օր ըստ օրէ յառաջանալու վրայ է, գազէսքէրի զաւակ ըլլալէն 'ի զատ, բնութիւն ընտիր և խոհեմ և դասալեզ ըսված գրին աղէկը և գեղեցիկը գրող, և իր հօրը հետ գտնված ըլլալով, այս բարեգութ Ինքնակալին ժամանակը ասանկ յառաջադէմ եղողներուն Թագաւորական անհամար պարգևներ տրվելը յայտնի է։

Ասոնի իր հօրը պատիւ և իրէն շնորհք ըլլալու դիտաւորութիւնը՝ զիլգատէի ամսոյն 3 ին՝ իրէն ունեցած դասատրվուելու պաշտօնին հետ, ութերորդ դաս ըսված աստիճանը շնորհեցաւ։ այս կողմանէ ալ հօրը ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ։

Սիլիստրէի նահանգին մէջ Խալիմեայի քաղաքին վոյվոտայութիւնը՝ Սիլիստրէի բըդեշխին աւանդիպես (էմանէթիպես) յանձնըվեր է։ և այն ալ իր կողմանէ նոյն քաղաքին մէջը մեկ փոխանորդ մը դրած էր։

Իսկ այն փոխանորդը՝ աղքատը և բաեայները աղէկ կառավարելու կարող չըլլալով, և անոր վրայ մեկ քանի գանգատանքներ ալ եղած ըլլալուն համար, նոյն վոյվոտայութիւնը այս անգամ Ինքնակալին հրամանով ազգուանի դիվանին խոճայեաններէն՝ նախկին Խումպարախանէին գրագիր Ցիերիա էֆէնտիին՝ այս 47 թուին մարտի ամսէն համարելով՝ աւանդի պէս յանձնվեցաւ։

Կաթոլիկ ազգին Պ. ալաթայի և Պէկօղլուի կողմերը եղած տուներուն և ըստացուածքներուն ետ տրվելու վրայօք

խնդրվածքները՝ արքայական վերհսկողութեամբ ընդունելի եղեր էր. ինչպէս ։ նուագարանով տրված տանձկաց Լրոյ գրին մէջը գրված էր։

Այս անգամ նոյն Կաթոլիկ աղգին կողմանէ նեղուցին մէջը վերի կողմերը եղած տունները և ծովեղերքը գտնված քնարարանները եւ տրվելու համար՝ արքայական հրաման խնդրված էր։

Արբերար ինքնակալը առ հասարակ բաներայի և ազատի վրայ յայտնի ունեցած առատ գթութիւն և մարդասիրութիւն ստիպեալ, ասոնց այս խնդրվածքին ալ մեկ անօրէնութիւն մը ըլալ արժան համարեցաւ։

Այլ խնդրված ծովեղերեայ քնարարաններուն շատին վրայ առնօղներուն կողմանէ շատ ծանր եղած էր. և ասկեց՝ի զատ մեկ քանին՝ մանաւանդ Արիկին օղլուի և Էնկել գեղի պէս տեղվանք եղածները՝ տանձկաց ծովեղերեայ ազարանքներուն մէջերը գտնվելով՝ այժմուս բաներայի տրվելը պատշաճ չէր։ Մի միայն տասնկ անօրին վեցաւ, որ այս ծովեղերեայ քնարարանները տանձիկներուն ծախված տունը՝ յիրաւի այն ժամանակին բերմունքին գ ին չքնելով՝ վար գնով առուծախ եղած էր։

Ուստի այժմուս այն խնդրված տուներին և ծովեղերեայ քնարարաններին որն որ եւ տրվել, և մէջը բաներայ քնակիլ վայելել, անոնք եւ տրվին. սակայն այժմեան տեր եղողներուն, նախ՝ առած տեղին տրված գները, և երկրորդ՝ յետոյ վրան ծանր ըրած սակները՝ արքունի շինվածապետ Աֆենտիին և ուրիշ վերահասու եղողներուն գիտութիւնը առուգելով եւ տրվին։

Եւ այս քնարարաններուն մէջը կրկին անգամ բաներայ նստելու յարմար եղածներուն՝ նոյնպէս վերահասու եղող անտաշառ մարդիկներու վարիածովը (թահմինովը) ուղիղ խղճմտանքով առջի գներուն վրայ որչափ վերադիր ըլալ պատշաճ կըտեսնվի, այնչափ վերադիրը առջի տիրոջը տալ՝ այժմեան տիրոջը խօսվի. եթէ հաճութիւն չըտայ, այն ժամանակը իր տրված գինը և ստուգեալ ծախքը՝ առջի տիրոջը կողմանէ իրեն տրվի. և ձեռքին քնարարանը առնվի. և առջի տերը՝ ուրիշ ուզող տանձկի մը արժօղ գնով ծախէ։

Եւ ահա եւ տրվելը խնդրված տուներուն և ծովեղերեայ քնարարաններուն ամենին մեկին որչափ որ կարելի է՝ յարմար և պատշաճ կերպով տնօրէնութիւն ընել՝ այժմեան ընչեց մաքսապետ Սալեհ պէկ էֆենտիին՝ առջինները նման արքունական հրամանով յանձնվված է։

—

ԱՐՏԱՌՈՑ ԴԻՊՎԱԾ։

() Իզատէի ամսոյն 15 ին՝ երկուշաբթի օրը՝ արքայանիստ քաղաքը սուլթան Մահմէտի վճարանքի մօտ՝ Թիւրպէ սօխանի ըսված տեղը, 20 տարի յառաջ շինված սափրիչ Մարտին կնկանը տունը ինքիրեն փլեր է. և այն կընիկը թէպէտ փայտերուն ներքեւը մնացեր է, բայց պահպանութիւն յաւիտենականին մեկ մազին ջնաս չըլալով հանեցին։

—

ԳՈՒՐՇԻՍՏԱՆ ՕՂՈՐԱՑ

() Իզատէի ամսոյն 14 ին՝ կիրակի օրը ժամը 3 ին Փերիդի տաքերի պէկլիքը պէկի Մուհամմէտ փաշային կառավարութեան ներքեւը եղող ձիաւոր գունդերին՝ Մուհամմէտ ալի պէկին գնդապետ եղած ամսականով ձիաւոր վեցերորդ գունդին գաւառապետութիւններուն հետ խրկվելու մանսուրի զօրաց երկրաչափներին 'ի զատ, նախայիշեալ փաշային հետ յատկացեալ երկրաչափներով և ուրիշ պաշտօնատարներով մեկ տեղ Իսկիւտար Խպրահիմ աղայ ջայրի ըսված տեղին ելաւ. և Սերասքեր փաշային և Գամիուտան փաշային յառաջ ընթաց ունենալով, շնտակ Տերբէնտ ըսված կամուրջը (քէօփրիւն) գնաց. և յետոյ յիշեալ փաշային՝ Սերասքեր փաշային և Գամիուտան փաշային հետ մնաք բարով ընելով, և անոնք ալ յոյ բարի յաջողութիւն խնդրելով եւ դարձերին։